



«Այբ կրթական հանգույց» հիմնադրամ  
Երևան 0052, Թբիլիսյան խճ. 11/11  
Հեռ.՝ +374 60 500 456, +374 94 546 498  
info@aybschool.am  
www.aybschool.am

<p>Արձանագրություն N ASBT04-1911-C (1009) <b>«Այբ կրթական հանգույց» հիմնադրամի 4-րդ գումարման Հոգաբարձուների խորհրդի նիստի</b></p>	
Ամսաթիվ՝	10 սեպտեմբերի 2019 թ.
Անցկացման վայր՝	«Այբ» դպրոց, ՀՀ, ք. Երևան, Թբիլիսյան խճուղի 11/11;
Նիստի սկիզբ՝	09:30
<b>ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ</b> Հև անդամներ՝ Անահիտ Ադամյան- միացել է առցանց Արթուր Ալավերդյան, Սարգիս Բադալյան- միացել է առցանց Վասկեն Յակուբյան:	
Նիստին մասնակցել են Հոգաբարձուների խորհրդի յոթ անդամներից չորսը, ինչն ապահովում է որոշումների կայացման համար անհրաժեշտ քվորումը: Առանց ձայնի իրավունքի նիստին մասնակցում էին Արամ Փախչանյանը (գործադիր տնօրեն), Մերի Հովսեփյան (ակադեմիական տնօրեն) և Դավիթ Սահակյանը (գործառնական տնօրեն): Նիստի քարտուղար ընտրվեց՝ Սիրանուշ Սուքիասյանը:	
<b>Հարց 1. (Օրակարգի հաստատում)</b>	
Քանի որ հան քրեյզը ներկա չէր նիստին, Հև-ն որոշեց, որ նիստը կվարի դպրոցի գործադիր տնօրեն Արամ Փախչանյանը: Արամ Փախչանյանը ներկայացրեց նիստի օրակարգը, իսկ Հև-ի անդամները հաստատեցին այն: <b>Որոշում հարց 1:</b> <i>Հաստատել Հև-ի նիստի 2019 թվականի սեպտեմբերի 10-ի օրակարգ :</i> Որոշումը կայացված է միաձայն:	

<p><b>Հարց 2. (Նախորդ նիստի արձանագրության հաստատում):</b></p> <p>Արամ Փախչանյանը ներկայացրեց նախորդ նիստի արձանագրությունը ըստ հավելված 1-ի :</p> <p><b>Որոշում հարց 2:</b></p> <p>Հաստատել նախորդ նիստի արձանագրությունը ըստ հավելված 1-ի:</p> <p>Որոշումը կայացված է միաձայն:</p>
<p><b>Հարց 3. (Հարցեր, որոնք այս օրակարգում ընգրկված չեն):</b></p>
<p><i>Առաջարկ չեղավ:</i></p>
<p><b>Հարց 4 (Նախորդ նիստից հետո դպրոցի աշխատանքների վերաբերյալ ընդհանուր տեղեկություններ):</b></p> <p>Դպրոցի գործադիր տնօրեն Արամ Փախչանյանը ներկայացրեց նախորդ նիստից հետո դպրոցի աշխատանքների վերաբերյալ ընդհանուր տեղեկություններ ըստ հավելված 2-ի:</p>
<p><b>Հիմնական թեմաները`</b></p>
<p>-Տարրական դպրոցի 1-ին և 2-րդ դասարանները տեղափոխվեցին հիմնական մասնաշենքեր:</p>
<p>- Կա տրանսպորտի կայանման խնդիր, որի լուծման համար դրվել է դարպաս, անվտանգության տնակը տեղադրվել է մուտքի մոտ, ինչպես նաև նոր կայանատեղի է կառուցվում Գ մասնաշենքին հարակից տարածքում :</p>
<p>- Նախկինում վարձակալվող տարրական դպրոցի շենքի սեփականատիրոջ հետ գործընթացը չի ավարտվել: Իրավաբանները զբաղվում են հարցի լուծմամբ:</p>
<p>- Շուտով նախատեսվում է սկսել եկեղեցու շինարարությունը:</p>
<p>- Արդեն Բ մասնաշենքի շքամուտքն ունի ծածկ:</p>
<p>-IT համակարգերի անվտանգությունը և արդյունավետությունը զգալի բարձրացել է:</p>
<p>- Ձայնակլանման նյութեր են ձեռք բերվել երաժշտության սենյակի համար: Եթե նյութերը իսկապես լավ աշխատեն, բոլոր խնդրահարույց տարածքների համար կգնվեն և կտեղադրվեն:</p>
<p>-Արդեն կիրառվում է միջին դպրոցի աշակերտների համար մենթոր ուսուցչի գաղափարը:</p>
<p>-Որոշ ուսուցիչներ ներգրավված են ԿԳՆ-ի կողմից առարկաների նոր չափորոշիչների մշակման գործընթացում:</p>
<p>-Սեպտեմբերից թիմին է միացել մարդկային ռեսուրսների մասնագետ:</p>
<p>-Ներկայացվեցին ընդունելության արդյունքները և դպրոցից դուրս եկած աշակերտների քանակը</p>
<p><b>Հարց 5 (2019/20 ուսումնական տարվա ակադեմիական առաջադիմության ներկայացում)</b></p>
<p>«Այբ» դպրոցի ակադեմիական տնօրեն Մերի Հովսեփյանը ներկայացրեց 2019/20 ուսումնական տարվա ակադեմիական առաջադիմությունը ըստ սույն արձանագրության հավելված 3-ի:</p> <p>Մերի Հովսեփյանը ներկայացրեց, որ առաջին կիսամյակի համամեատ քննությունների արդյունքների բարելավում կա: Ներկայացրեց առանձին առարկայական խնդիրները և առաջարկվող լուծումները:</p>

Ներկայացրեց նաև, որ միջին դպրոցի դասարաններից մեկում, մի շարք աշակերտների հետ պայմանագիրը չշարունակելու հետևանքով, զգալի բարելավվել է երեխաների վարքը և ուսման հանդեպ հետաքրքրությունը:

Նշվեց, որ հատուկ ուշադրություն պետք է դարձնել բնագիտական առարկաների դասավանդման որակի բարձրացմանը:

Նախատեսվում են միջառարկայական պրոյեկտներ ծրագրեր, օրինակ ֆիզիկայից և մաթեմատիկայից: Այդ պրոյեկտների համար դասացուցուցակում հատուկ ժամեր են հատկացված:

Շատ կարևոր թիրախ է միջին դպրոցում վարքային խնդիրների լուծումը :

**Հարց 6 (Հաշվետվություն «Այբ» դպրոցի աշխատանքային պլանի առաջընթացի վերաբերյալ՝ հաջորդելով 2017/18 թթ UCL-ի գնահատման)**

Դպրոցի գործադիր տնօրեն Արամ Փախչանյանը ներկայացրեց հաշվետվություն «Այբ» դպրոցի աշխատանքային պլանի առաջընթացի վերաբերյալ՝ ի հետևում Հիս կողմից հաստատված ռազմավարական պլանի ըստ հավելված 4-ի:

- ԱԲ ծրագրի հիմնական նպատակները վերանայելուց հետո՝ ՄԴ-ի համար և կիրառել այն
- Ինֆորմացիոն համակարգի բարելավման գործընթացը դեռ նախնական փուլում է, քննարկվում է IT ծառայությունների արտապատվիրումը (outsourcing)
- Նախագծային ուսուցման համար նպատակը բոլոր գործընթացները փաստաթղթավորելն է մինչև հունվար
- Այլ դպրոցների հետ համեմատությունը ընթացքում է: Համագործակցության արդյունքում կձևավորվեն այլ դպրոցների հետ համեմատվելու գործիքներ
- Մանկապարտեզի բացման համար կձևավորվի աշխատանքային խումբ
- Հոկտեմբերից կսկսվի եկեղեցու շինարարությունը
- Արևային մարտկոցները շահագործման փուլում են
- Անվտանգության տնակը տեղադրված է, բայց դեռ կահավորումը ընթացքում է
- Ուսուցիչների համար նախատեսվում է բաց համաժողով գարնանը, որտեղ նրանք կներկայացնեն իրենց հետազոտությունները
- Մինչև հոկտեմբերի կես կսահմանվեն թիրախներ անձնակազմի համար :

**Հարց 7. (Հնգամյա ռազմավարական պլանի առաջընթացը):**

Արամ Փախչանյանը ներկայացրեց, որ հնգամյա ռազմավարական պլանի նախագիծը / հավելված 5/ զգալի փոփոխության չի ենթարկվել նախորդ պլանի համեմատ, քանի որ տնօրինության տեսակետից կարիք կա նոր, ավելի հավակնոտ ռազմավարական թիրախներ սահմանել:

Առաջարկ եղավ ռազմավարական քննարկում կազմակերպել Հիս—ի հետ:

Որպես հավելյալ նպատակներ ընթացիկ տարվա համար պետք է ներառել մի քանի կետ, որոնք կառաջարկվեն առցանց:

**Որոշում հարց 7:**

*Որոշվեց ռազմավարական պլանի վերաբերյալ գրավոր առաջարկներ, հավելումներ անել առցանց, իսկ տնօրենությունը հանձն է առնում կազմակերպել քննարկում ռազմավարության վերաբերյալ:*

Որոշումը կայացված է միաձայն:

**Հարց 8. (2019-2020 թթ ուս. տարվա բյուջեի չափանիշների նախնական ներկայացում):**

Դավիթ Սահակյանը (Գործառնական տնօրեն) ներկայացրեց 2019-2020 թթ ուս. տարվա նախնական բյուջեի չափանիշների մշակումը դեռ ընթացքի մեջ է: Նա ներկայացրեց, որ ամեն ինչ արվում է գործառնական մասով բյուջեի արդյունավետությունը ապահովելու համար՝ արդեն փոխվել է տրանսպորտային ընկերությունը, հոկտեմբերի կեսերից մաքրության ծառայությունը կլինի արտաքին և այլն:

**Հարց 9. («Այբ» դպրոցի Հոգաբարձուների խորհրդի ձևավորման կարգի ներկայացում և հաստատում):**

Դավիթ Սահակյանը (Գործառնական տնօրեն) ներկայացրեց «Այբ» դպրոցի Հոգաբարձուների խորհրդի ձևավորման կարգը ըստ հավելված 6-ի:

Ներկայացվեցին դասային կարգերը և ներդասային ընտրության կարգը՝ ռեյտինգային և երկփուլանի : Ինչպես նաև ներկայացվեցին ընտրությունների ժամկետները:

Ընտրությունների պատասխանատուն դպրոցի գործող ՀԽ-ն է:

**Որոշում հարց 9:**

*Որոշվեց հաստատել Հոգաբարձուների խորհրդի ձևավորման կարգը ըստ հավելված 6-ի և կազմակերպել Հոգաբարձուների խորհրդի նոր կազմի ձևավորումը ըստ այդ կարգի և կարգում ներկայացված ժամանակացույցի:*

*Որոշումը կայացված է միաձայն:*

**Հարց 10 («Այբ» դպրոցի կառավարման մարմինների Էթիկայի կանոնների ներկայացում և հաստատում):**

Դավիթ Սահակյանը (Գործառնական տնօրեն) ներկայացրեց «Այբ» դպրոցի կառավարման մարմինների Էթիկայի կանոնները ըստ սույն արձանագրության հավելված 7-ի:

Քննարկվեց, որ փաստաթուղթը պիտի լինի ամբողջ «Այբ» համակարգի համար, և պիտի արդյունքում հաստատվի «Այբ» համակարգի բոլոր կառուցյների կառավարման մարմինների կողմից: Դրա համար պետք է տարվի համատեղ աշխատանք: ՀԽ-ի անդամները ներկայացրեցին իրենց պատրաստակամությունը լրացումներ ուղարկել առցանց:

**Որոշում հարց 10:**

*Որոշվեց փաստաթղթին տալ նախնական հավանություն և առաջադրել դպրոցի տնօրինությանը աշխատանք տանել Հազաբարձության խորհրդի անդամների ներգրավվմամբ, որպեսզի մինչև հոկտեմբեր 1-ը ունենալ վերջնական փաստաթուղթ:*

**Հարց 11. («ՎԷՄ» կազմակերպությունը «Այբ» համակարգի կազմակերպություն ճանաչելու վերաբերյալ և ըստ այդմ «ՎԷՄ» կազմակերպության տնօրենի համար կիրառելի դարձնել «Այբ» համակարգի աշխատակիցների համար նախատեսված ուսման վճարի սակագինը):**

Արամ Փախչանյանը ներկայացրեց «ՎԷՄ» կազմակերպությունը «Այբ» համակարգի կազմակերպություն ճանաչելու վերաբերյալ հարցը:

**Որոշում հարց 11:**

*Որոշվեց ճանաչել «ՎԷՄ» կրթամշակութային հիմնադրամը «Այբ» համակարգի կազմակերպություն և կիրառել «Այբ» համակարգի կազմակերպությունների համար գործող ուսման վարձի հատուկ սակագին «ՎԷՄ» հիմնադրամի տնօրենի համար, ինչպես նաև իր կողմից ներկայացված և «ՎԷՄ» կրթամշակութային հիմնադրամամի աշխատող հանդիսացող անձանց ևս երկու երեխաների համար:*

*Որոշումը կայացված է միաձայն:*

**Հարց 14. (Նիստի ավարտ):**

**Հանդիպումն ավարտվեց ժամը 14.25-ին:**

**Հիւ անդամներ (BT members)**

Անահիտ Ադամյան (Anahit Adamyan) \_\_\_\_\_

Արթուր Ալավերդյան (Artur Alaverdyan) \_\_\_\_\_

Սարգիս Բադալյան (Sargis Badalyan) \_\_\_\_\_

Վասկեն Յակուբյան (Vasken Yacoubian) \_\_\_\_\_

**Նիստի քարտուղար (Secretary of the session)**՝ Սիրանուշ Սուքիասյան (Siranush Sukiasyan) \_\_\_\_\_